Հաստատում եմ՝
ԱՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարար
_____ Ա. Հակոբյան
«15» հունվար 2022 թ.

Կ Ա Ր Գ

«Արցախյան գորգարվեստ» հանրապետական հինգերորդ մրցույթի անցկացման

1. Մրցույթի նպատակները

- ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում.
- արցախյան գորգագործական ու ասեղնակարի մշակութային ավանդույթների վերականգնում, ժամանակակից գեղարվեստական ճաշակին ու պատկերացումներին բնորոշ տարրերով լրացում.
- ժողովրդական արհեստների հանրահռչակում, զարգացում և փոխանցում սերունդներին.
- ազգային ավանդական մշակույթի հանդեպ հարգանքի ու հոգածության վերաբերմունքի արմատավորում:

2. Մրցույթի կազմկոմիտեն

- կազմավորվում է ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով.
- իրականացնում է մրցույթի ընդհանուր ղեկավարումը.
- զբաղվում է մրցույթի նախապատրաստական, կազմակերպչական, գովազդման և ՁԼՄ-ներում լուսաբանման հարցերով.
- մրցույթի գնահատող հանձնախմբի ստեղծման վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում նախարարին.
- անհրաժեշտության դեպքում փոփոխություններ և լրացումներ է մտցնում սույն կարգի մեջ:

3. Մրցույթի գնահատող հանձնախումբը

- կազմավորվում է ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով.
- ուսումնասիրում և 10 բալանոց սանդղակով ու փակ քվեարկությամբ գնահատում է մրցույթին ներկայացված աշխատանքները.
- սահմանում է մրցանակային ֆոնդը.
- անհրաժեշտության դեպքում կարող է մրցանակները կիսել կամ չշնորհել, ինչպես նաև սահմանել խրախուսական մրցանակներ:

4. Մրցույթի անցկացման պայմանները

- մրցույթն անց է կացվում 1 փուլով և 3 անվանակարգով.
  - «Գորգ»,
  - «Կարպետ»,
  - «Ասեղնագործություն».
- մասնակիցների տարիքային սահմանափակում չկա.
- նախորդ մրցույթում առաջին մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները երկրորդ անգամ նույն անվանակարգով մասնակցելու իրավունք չունեն.
- յուրաքանչյուր մասնակից նույն անվանակարգում իրավունք ունի ներկայացնելու իր կողմից գործված մեկ աշխատանք.
- պարտադիր պայման է արցախյան գորգապատկերների և զարդանախշերի օգտագործումը՝ գունային ճիշտ համադրությամբ.
- «Գորգ» և «Կարպետ» անվանակարգերում ներկայացված աշխատանքները պետք է ունենան առնվազն 1 մ^2 մակերես, «Ասեղնագործություն» անվանակարգում՝ առանց սահմանափակման.
- աշխատանքները պետք է անձնագրավորված լինեն (գործվածքի անվանումը) և ունենան հյուսողի կնիք-արձանագրությունը (բնակավայր, տարեթիվ).
- կազմակերպիչներին իրավունք է վերապահվում աշխատանքներն օգտագործել գովազդման և մրցույթի մասսայականացման նպատակներով.
- մասնակիցները, ցանկության դեպքում, արցախյան գորգապատկերների և զարդանախշերի նկարներ կարող են ձեռք բերել ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բաժնից (ք. Ստեփանակերտ, Թումանյան 59):

5. Հայտերի ընդունման կարգը

Մասնակցության հայտերը պետք է ներկայացնել ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բաժին՝ մինչև ս. թ. օգոստոսի 15-ը, իսկ պատրաստի աշխատանքները՝ մինչև սեպտեմբերի 15-ը:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն հոկտեմբերին՝ Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում:

Արդյունքների ամփոփումից հետո աշխատանքները կվերադարձվեն, բացառությամբ՝ մրցանակային տեղեր զբաղեցրած աշխատանքների:

6. Արդյունքների ամփոփումը

Աշխատանքները քննելիս հաշվի կառնվեն սույն կարգի պահանջների կատարումը, արցախյան գորգապատկերների ու զարդանախշերի օգտագործումը, գունային ճիշտ համադրությունը, հումքի որակը և գործվածքի խտությունը:

Մրցույթի հաղթողները կորոշվեն գնահատող հանձնախմբի անդամների կողմից տրված գնահատականների հանրագումարով:

Հավելյալ տեղեկությունների ու պարզաբանումների համար զանգահարել 047 97 91 34 հեռախոսահամարով:

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԳԱՐՎԵՍՏ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ № ____

1. _____

անուն, ազգանուն, հայրանուն

2. _____

ծննդյան օր, ամիս, տարեթիվ

3. _____

բնակության վայր

4. _____

աշխատավայր

5. _____

հեռախոսահամար

6. _____

էլ. հասցե

7. _____

անվանակարգ

_____

8. _____

ներկայացվող աշխատանքի անվանումը և չափը

_____

9. _____ 10. _____

լրացման ամսաթիվ *ստորագրություն*